Նոտարական ակտի կոդ: 578-20190318-37-3637735
Նոտարական ակտի գաղտնագիր: VZYKBM

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տասնինը թվականի մարտի քսանհինգին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Արմավիր

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝ **ԼԱՐԻՍԱ ՎՈՒՂԴԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ**, ծնված՝ 28/02/1951թ-ին, **ՍՏԵՓԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ**, ծնված՝ 08/03/1947թ-ին, որոնց անուններից 08 փետրվարի 2019թ. ՀՀ ,,Արմավիրի մարզ., նոտարական տարածքի նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյանի կողմից վավերացված թիվ 663 լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԱՐԹՈՒՐ ՄԱԳԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ծնված՝ 01/07/1987թ-ին, ՀԾՀ՝ 1107870100, անձնագիր՝ AP0663777, տրված՝ 048-ի կողմից, 12/12/2016թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ԱՐՄԱՎԻՐ, ՄԱԾՏՈՑԻ Փ., 3Բ Շ, 11ԲՆ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» և ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՀՎՀՀ՝ 01223338, Գրանցման համար՝ 271.0094, Հասցե՝ ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա, ի դեմս արդարադատության գնդապետ Հ. Հակոբյանի, **որի կողմից** 21 փետրվարի 2019թ. տրված լիազորագրով գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԽՈՐԵՆ ՅՈՒՐԻԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 20/08/1975թ-ին, ՀԾՀ՝ 3008750052, նույնականացման քարտ՝ 008160210, տրված՝ 048-ի կողմից, 20/10/2017թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ԱՐՄԱՎԻՐ, ԾԱՀՈՒՄՅԱՆ Փ., 16 Շ, 6ԲՆ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 10ա հասցեում գտնվող 360,9 /երեք հարյուր վաթսուն ամբողջ ինը տասնորդական/ քմ մակերեսով վարչական շենքից թիվ 2632733 սեփականության իրավունքի գրանցման վկայականի շենքի հատակագիծը բաժնում նշված թիվ 8 (36,5քմ), 9 (20քմ), 10 (16,8քմ), 11 (16,5քմ), 12 (36,9քմ), 13 (10քմ) և 14 (42,1քմ) տարածքները, այսուհետ «Գույք»:
1.2. Գույքը տրամադրվում է որպես գրասենյակ օգտագործելու համար:
1.3.Վարձատուն վարձակալության հանձնված Գույքի սեփականատերն է համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից 09 մարտի 2009թ. տրված թիվ 2632733 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականի:
1.4.Համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումից 15 մարտի 2019թ տրված թիվ ՍՏ-15032019-04-0333 միասնական տեղեկանքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 10ա հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ գրավի իրավունքը:
1.5. ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ն տվել է իր համաձայնությունը որպեսզի Գույքը հանձնվի վարձակալության, պայմանով, որ վարձակալության պայմանագրում պարտադիր ամրագրվեն ներքոնշյալ պայմանները.
ա),,Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ գրավի իրավունքով և վերջինս հանդիսանալով վարձակալվող գույքի նկատմամբ գույքային իրավունքի տիրապետող, իրավունք ունի որպես շահագրգիռ անձ ցանկացած ժամանակ Կողմերից պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը: Բանկի այդ պահանջը պարտադիր է Կողմերի համար պահանջը ստանալուց 3 /երեք/ օրվա ընթացքում՝ կատարելով այդ լուծման նոտարական վավերացում և դրանցից բխող վարձակալի իրավունքների դադարեցման գրանցում ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական կադաստրում: Հակառակ դեպքում Բանկի պահանջը հիմք է հանդիսանում վարձակալության իրավունքը գրանցած ՀՀ իրավասու պետական մարմնի համար՝ Վարձակալության պայմանագիրը լուծված համարելու և Վարձակալի՝ վարձակալած գույքի նկատմամբ ունեցած իրավունքների դադարեցումը գրանցելու համար:
Վարձակալը բանկի պահանջը ստանալուց հետո 3 /երեք/ օրվա ընթացքում պարտավոր է ազատել վարձակալած գույքը:

Սույն կետի ուժով վարձակալված գույքի նկատմամբ Վարձակալի ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար Կողմերի համաձայնությունը համարվում է տրված:
Պայմանագրի սույն կետը չի կարող փոփոխվել կամ հանվել առանց ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ի գրավոր համաձայնության:
բ) Կնքվելիք Վարձակալության հայմանգր/եր/ի պատճեն/ներ/ը պետք է տրամադրվի ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ին որպես Վարձակալած գույքի գրավառու:
Սույն համաձայնությամբ վկայակոչված պայմաններից/պահանջներից նույնիսկ մեկ պայմանը/պահանջը չապահովելու դեպքում սույն համաձայնությունն իրավական ուժ չունի և այն տրման պահից առոչինչ է:
1.6.Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.ՎԱՁԱՏՈՒՆ իրավունք ունի՝
2.1.1.ՎԱՐՁԱԿԱԼԻՑ պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.
2.1.2. ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.
2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.
2.1.4. Վարձակալն իրավունք ունի գույքը ենթավարձակալության տալ Վարձատուի գրավոր համաձայնությամբ:
2.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝
2.2.1.Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան վիճակում.
2.2.2. Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր,որակի հավաստագիր և այլն).
2.2.3.ՎԱՐՁԱԿԱԼԻՆ նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (Գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.
2.2.4.Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը:
2.3.ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի՝
2.3.1.Պահանջել ՎԱՐՁԱՏՈՒԻՑ սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.
2.3.2. ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.
2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
2.3.3.1.ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
2.3.3.2.ՎԱՐՁԱՏՈՒԻՆ նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.
2.3.3.3.Պահանջել լուծելու պայմանագիրը.
2.3.4.Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը,եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է.
2.3.4.ՎԱՐՁԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրի 2.2.3. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում:
2.3.5..Կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.
2.3.6.Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.
2.4. ՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավոր է՝
2.4.1. ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.2.Գույքը պահպանել պատշաճ վիճակում :
2.4.3.Պայմանագիրը դադարելու դեպքում ՎԱՐՁԱՏՈՒԻՆ վերադարձնել Գույքն իր կողմից ստացած վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը.

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 120 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը չի

ներառում եկամտային հարկը: Պայմանագրի կնքման պահից 1(մեկ) տարին լրանալուց հետո կողմերն իրավունք ունեն միմյանց ներկայացնելու վարձավճարի չափի վերանայման պահանջ: Ընդ որում հետագայում պահանջը կարող է ներկայացվել տարին մեկ անգամ:

3.2.Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերի համար վճարում է Վարձակալը:

3.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նշված տարածքի բոլոր տեսակի կոմունալ վճարները կատարվելու է Վարձակալի կողմից :

4..ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա ՎԱՐՁԱՏՈՒՆ իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար:Եթե նման վճարը լիովին չի մարում ՎԱՐՁԱՏՈՒԻՆ պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ կամ պետք է ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

4.3.Վարձակալը պարտավորվում է վճարել բոլոր տեսակի կոմունալ վճարները :

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

6 .ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

6.1.Վարձակալած գույքից ՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2.Եթե ՎԱՐՁԱԿԱԼՆ իր միջոցների հաշվին և ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի հատուցում ստանալու այդ բարելավումների արժեքի չափով:

6.3.ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.4.Վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած. ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են ՎԱՐՁԱՏՈՒԻ սեփականությունը

7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

7.1. Կողմերից մեկի պահանջով պայմանագիրը կարող է լուծվել նախապես 3 ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

7.2.ՎԱՐՁԱՏՈՒԻ պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ՝

7.1.1.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

7.1.2.Էականորեն վատթարացել է Գույքի վիճակը.

7.1.3.Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարելԳույքի ընթացիկ վերանորոգումը:

7.2.ՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1. ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ,որոնց մասին ՎԱՐՁԱՏՈՒՆ չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ և վերջինը չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Գույքը զննելիս կամ դրա սարքինությունը ստուգելիս:

7.2.2.Հանգամանքների բերումով,որոնց համար ՎԱՐՁԱԿԱԼԸ պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7.2.3. ,,Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ գրավի իրավունքով և վերջինս հանդիսանալով վարձակալվող գույքի նկատմամբ գույքային իրավունքի տիրապետող, իրավունք ունի որպես շահագրգիռ անձ ցանկացած ժամանակ Կողմերից պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը: Բանկի այդ պահանջը պարտադիր է Կողմերի համար պահանջը ստանալուց 3 /երեք/ օրվա ընթացքում կատարելով այդ լուծման նոտարական վավերացում և դրանցից բխող վարձակալի իրավունքների դադարեցման գրանցում ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական կադաստրում: Հակառակ դեպքում Բանկի

պահանջը հիմք է հանդիսանում վարձակալության իրավունքը գրանցած ՀՀ իրավասու պետական մարմնի համար՝ Վարձակալության պայմանագիրը լուծված համարելու և Վարձակալի՝ վարձակալած գույքի նկատմամբ ունեցած իրավունքների դադարեցումը գրանցելու համար:
Վարձակալը բանկի պահանջը ստանալուց հետո 3 /երեք/ օրվա ընթացքում պարտավոր է ազատել վարձակալած գույքը:
Սույն կետի ուժով վարձակալված գույքի նկատմամբ Վարձակալի ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար Կողմերի համաձայնությունը համարվում է տրված:
Պայմանագրի սույն կետը չի կարող փոփոխվել կամ հանվել առանց ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ-ի գրավոր համաձայնության:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

9.ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
9.2.Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
9.3.Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
9.4.Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա կողմերի հետագա պարտավորությունները շարունակվում են համաձայնագիր կնքելու միջոցով:
9.5. Եթե Վարձակալը պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
9.6.Վարձակալը սույն պայմանագրում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված վարձավճարի 0.05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Վարձավճարի չվճարման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Վարձակալը վճարում է տույժ պայմանագրի գնի 0.05 տոկոսի

չափով: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

9.7. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

9.8.Եթե պայմանագրի կնքումից հետո ի հայտ են գալիս թերություններ, որոնք Վարձատուն չի նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին:

10.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

9.2.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից առաջին օրինակը պահվում է ՀՀ ,,Արմավիրի մարզ,, նոտարական տարածքի գրասենյակում, երկրորդ օրինակը պետք է ներկայացվի ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում-պետական գրանցման , իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին :

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

ՎԱՐՁԱՏՈՒ----------

ՎԱՐՁԱԿԱԼ----------

Երկու հազար տասնինը թվականի մարտի քսանհինգին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ ,,Արմավիրի մարզ,, նոտարական տարածքի նոտար՝ ՅՈՒՐԱ ԽԱՉԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագրի կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, պետական մարմնի իրավունակությունը ստուգված են:
ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:
Գրանցված է գրանցամատյանում թիվ 1552 ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյան